

ՆԱԽԱՐԱՐ ՄԸՔՏԱՏ ԿԸ ՃԱԽԱԿՅԻ ՄԱՐՈՔԻ ԺՈՂՎՈՐԴԻՆ՝ ԵՐԿԻՐԸ ՃՆՃԱԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՈՒ ԱՐՉԱՆԱԳՐՈՒՄԸ ԶՈՂԵՐՈՒՆ Ի ՏԵՍ

Սուրիոյ արտաքին գործոց Նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ ցաւակցագիր յղեց Մարոքեան Թագաւորութեան արտաքին հարցերու, ափրիկեան գործակցութեան եւ արտերկրի մէջ մարոքցիներու հարցերու Նախարար Նասեր Պորիթային՝ 9 Սեպտեմբեր 2023-ի առաւօտեան Մարոքը ցնցած երկրաշարժին տխուր առիթով, որուն հետեւանքով հարիւրաւոր զոհեր արձանագրուեցան եւ երկիրը ահաւոր քանդումի ենթարկուեցաւ:



Նախարար Մըքտատ Պորիթային Սուրիոյ ժողովուրդին զօրակցութիւնը յայտնեց տեղի ունեցած աղէտին լոյսին տակ, խնդրելով Ամենակալէն որդրմութիւն՝ երկրաշարժի զոհերուն հոգիներուն եւ շուտափոյթ ապաքինում վիրաւորներուն:

Յիշեցնենք, որ Ուրբաթ, 8 Սեպտեմբերին, Մարոքի Մարաքէշ քաղաքին մօտակայքը ցնցած 7 ռիխթըր ուժգնութեամբ երկրաշարժին հետեւանքով ցարդ 2012 զոհ եւ 1404 վիրաւոր արձանագրուած եւ: Երկրին մէջ եռօրեայ սուգ յայտարարուած է:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵ ԼԻՊԻՈՅ

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց Սուրիոյ Հանրապետութեան խորին ցաւակցութիւնները Լիպիոյ կառավարութեան եւ եղբայր ժողովուրդին՝ «Տանիէլ» աւերիչ մրրիկին պատճառած զոհերուն համար, որոնց թիւը հասաւ աւելի քան 3000-ի:



Նախարարութիւնը աւելցուց. «Սուրիա կը զօրակցի Լիպիոյ ղեկավարութեան, կառավարութեան եւ ժողովուրդին այս աղէտալի պայմաններուն մէջ եւ կը ցաւակցի զոհերուն, վիրաւորներուն եւ անյայտ կորածներուն ընտանիքներուն»:

Նախարարութիւնը եզրափակելով ըսաւ. «Սուրիա վստահ է, որ Լիպիա պիտի կարենայ յաղթահարել այս աղէտը»:

ՀՈԳԵՒՐ ՊԵՏԵՐԸ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ ԿՈՉ Կ՛ՈՒՂԴԵՆ ԱՐՃԱՆԻ ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐ ԾԱԽԱՆԸՈՒ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին հրաւերով եւ մասնակցութեամբ հոգեւոր պետերու եւ երէք հայ քաղաքական կուսակցութիւններու բարձրագոյն մարմիններու ներկայացուցիչներուն, Չորեքշաբթի, 6 Սեպտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուեցաւ խորհրդակցական յատուկ նիստ մը, միակ օրակարգ ունենալով Արցախի ժողովուրդին զօրակցելու հրամայականը:



Նիստին կը մասնակցէին Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Հոգեւոր Պետ Ամենապատիւ եւ Գերերջանիկ ՏՏ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու

Շաբ. Էջ 6 >

ՍԱՍՈՒԷԼ ՀԱՅՐԱՄԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՅԱԲ ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

9 Սեպտեմբերին՝ տեղւոյն ժամը 11:00-էն սկսաւ Արցախի Հանրապետութեան (ԱՀ) Ազգային ժողովի արտահերթ նիստը՝ Հանրապետութեան Նախագահի ընտրութեան օրակարգով:



ԱՀ Ազգային ժողովի 5 խմբակցութիւններէն 4-ին՝ «Ազատ Հայրենիք-ԶՄԴ», «Արդարութիւն», «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» եւ «Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւն» խմբակցութիւնները ԱՀ Նախագահի պաշտօնին առաջադրեցին գործող պետական Նախարար Սամուէլ Ծահրամանեանի թեկնածութիւնը:

Նիստին սկիզբը «Ազատ Հայրենիք-ԶՄԴ», «Հայ Յեղափոխական Դաշ-

Շաբ. Էջ 3 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԸՆՈՐՀԱՌՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Վսեմաշուք Տիար Սամուէլ Ծահրամանեան Նորընտիր Նախագահ Արցախի Հանրապետութեան Ստեփանակերտ



Սիրելի՛ Պրն. Նախագահ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ եւ շերմ սիրով կ'որջունենք Ձեր ընտրութիւնը, որպէս Նախագահ Արցախի Հանրապետութեան: Այս առիթով շերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ եւ կը մաղթենք, որ Արցախի պատմութեան

Հայրապետական օրհնութեամբ, Աղօթարար՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Անթիլիաս, 11 Սեպտեմբեր 2023 Շաբ. Էջ 3 >

ՀՅԳ ԲԻՐՕՆ ԿԸ ԸՆՈՐՀԱՌՐԷ ԱՐՃԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԾԵՐԸ

Հակառակ սպառնալիքներին ու սաղրանքի փորձերին, գոհունակութեամբ արձանագրում ենք, որ Արցախում պետութեան ղեկավարի ընտրութիւնը տեղի ունեցաւ սահմանուած ընթացակարգերին համապատասխան, ինչը Արցախի սուլայեկտայնութեան (գոյաւորման-«Գ.») եւ ինքնուրոյն որոշումներ կայացնելու կարեւոր ցուցիչ է:



Իբրեւ արցախահայութեան ներկայացուցչական բարձրագոյն մարմին Արցախի խորհրդարանը

ՀՀԴ Բիւրօ 9 Սեպտեմբեր 2023 թ. Շաբ. Էջ 3 >

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԵՐՄ ՄԻՋԱՎԱՅՐ Է ՆԱԵՒ (ՎԵՐԱՄՈՒՏԻՆ ԱՌԻԹՈՎ)

2023-2024 ուսումնական տարեշրջանի վերամուտը ընթացք առավ: Սուրիոյ գրեթէ բոլոր վարժարանները սկսան կանոնաւոր դասաւանդութիւն կիրարկել՝ հակառակ երկրի տնտեսական ծանր եւ ապահովական յեղեղուկ պայմաններուն:

Այս պայմաններու յաղթահարման մեծապէս կը նպաստեն նաեւ հայկական վարժարանները, որովհետեւ այդ վարժարաններէն ներս հայ աշակերտը յատուկ ուշադրութեան ու խնամքի կ'արժանանայ, այդպէս եղած է սուրիահայ դպրոցներու հիմնադրութեան առաջին օրերէն, այդպէս է նաեւ այսօր:

Մեր աշակերտները եռանդով կը սկսին յաճախել հայկական վարժարաններ, որովհետեւ այնտեղ ուսման կողքին կը սորվին հայոց լեզու եւ գրականութիւն, կ'առնուին իրենց արմատներուն ու ընկերային ջերմ մթնոլորտի մէջ հասակ կ'առնեն՝ հասու դառնալով մեր անանդոյթներուն, մշակոյթին ու դպրութեան:

Մեր դպրոցները ունին նաեւ իրենց իւրայատուկ մթնոլորտը, որովհետեւ ունին պատմութիւն, անոնց երդիքին տակ հասակ առած են եղեռնէն ետք Հայկէս հաստատուած հայ սերունդներն ու անոնց շառաւիղները: Մեր դպրոցները եղած են սուրիահայ համայնքին անհատուկ ակնարկը ու հայ համայնքին գոյատեւման գլխաւոր երաշխիքը:

Իւրաքանչիւր դպրոց ունեցած է իր հայեցի բոյն ու մթնոլորտը: Այդ մթնոլորտը պահպանուած է ոչ միայն կառոյցի պատերուն ներքեւ, այլեւ կառոյցէն դուրս, տարածքին մէջ, շրջանին մէջ... ու շրջանը եղած է հայատրոփ միջավայր:

Հայերէն երգերուն, արտասանութիւններուն, հայախօս մեր աշակերտներուն ձայնը, կանչը, նոյնիսկ դպրոցէն արձակման ընթացքին ստեղծած աղմուկը շրջանին յատուկ երանգ ու դիմագիծ հաղորդած են: Աւելին. հայկական դպրոցին շուրջբոլորը դարձուցած են ապահով տարածք մը: Այս դերակատարութիւնը ունեցած են նաեւ միեւնոյն տարածքին մէջ գտնուող եկեղեցին, ակումբը, ընտանեկան հաւաքավայրերը, որոնք իրարու յենելով անառիկ ամրոցի վերածած են շրջանը: Հետեւաբար շատ բնական է որ համայնքի գաւազները ամէն գնով պահպանել կը փորձեն մինչեւ օրս եռուն մնացած հայաբնակ ու հայկական դպրոցով, եկեղեցիով եւ ակումբով օժտուած թաղամասերուն հայկական դիմագիծը:

Ու թէեւ համայնքին թիւը նօսրացած է, սակայն համայնքը ինքզինք ուժեղ կը զգայ նման ամրոցներով ու անոնց ներշնչած ապահովութեան զգացումով:

Ամրոցներ կը կոչենք նման կառոյցներ, որովհետեւ անոնք բազում զոհողութիւններու գնով մէջտեղ եկած են ու իրենց յուշամատենաներուն մէջ արձանագրել տուած պատմութիւնը համայնքի մը, որ դպրոց, եկեղեցի, ակումբ ու ազգային համալիրներ կողք-կողքի կառուցելով գոյատեւման իր երաշխիքները ամրագրած ու դիմադրութեան կամքը գործադրած է պատմական հայրենիքէն պոկուած ըլլալով մէկտեղ:

Վերամուտին առիթով ողջունելի է ազգային վարժարաններու ուսումնական տարին անվճար յայտարարելու պատասխանատու մարմիններուն քայլը, միեւնոյն ատեն գօտեպնդող է հայկական վարժարաններու տարածքներուն հայեցի մթնոլորտը, այլեւ դիմագիծը յամառօրէն պահպանելու մեր ժողովուրդի գաւազներուն վճռակամութիւնը:

Տնտեսական պայմանները մեզ կը թելադրեն ըլլալ ճկուն ու որոնել միջոցներ շահարկելու անօգտագործելի մեր կալուածները ու անով իսկ մասամբ մեղմացնելու համայնքի գաւազներուն տնտեսական ծանր քեռը, սակայն կարծիքներու փոխանակումով եւ կարելին ու յարմարագոյնը ի գործ դնելու յանձնառութեամբ կը հաւատանք, որ հայկական մեր ամրոցները անառիկ պահելու մեր հաւաքական ճիգը երբեք տեղի պիտի չտայ շնորհիւ մեր բոլորին զգօնութեան: Ու հայկական շրջաններու մեծ զոհողութիւններով պահպանուած դիմագիծը պիտի չխաթարուի:

Կարելի է շահարկումի յանձնել անօգտագործելի կալուածներ, առանց վտանգելու հայկական բոյրով օժտուած մեր թաղամասերու իւրայատկութիւնը, նման տարածքներու կալուածները միայն համայնքի գաւազներուն ծառայեցնելով:

«Գ.»

-Սուրիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ հրապարակեց որոշում մը, որուն համաձայն սուրիական բանակի սպաներուն, աստիճանաւոր սպաներուն եւ զինուորներուն ամուսնութեան պարագային տրուած կանխավճար գումարի փոփոխութիւն կատարուեցաւ:

Սպաներուն նախապէս 50.000 ս.ո. կանխավճար կը տրուէր, աստիճանաւոր սպաներուն՝ 40.000 ս.ո., իսկ զինուորներուն՝ 30.000 ս.ո., սակայն նախագահական Նոր որոշումին համաձայն անոնց 2 միլիոն ս.ո. պիտի տրամադրուի որպէս նուէր գումար: Գումարը կը յանձնուի ամուսնութեան արտօնագրի ստանձնումէն ետք:



Նախագահ Ասատ հրապարակեց նաեւ այլ որոշում մը, որուն համաձայն սուրիական բանակին կամաւոր ծառայողներուն ծառայութեան հաստատումէն անմիջապէս ետք 2 միլիոն ս.ո. պիտի տրամադրուի: Իսկ իւրաքանչիւր զինուորական ծառայութեան տարի անոնց պիտի տրամադրուի եւս 1 միլիոն ս.ո.: Գումարը՝ 10 միլիոն, կը յանձնուի 10 տարուան զինուորական ծառայութեան ամբողջացումէն ետք:

-Սուրիոյ Բարձրագոյն Կրթութեան Նախարարութիւնը հրապարակեց Նոր ցուցակ մը, որուն համաձայն Հայկէսի Պետական Համալսարանէն ներս վարչական Նոր պաշտօնեաներ նշանակուեցան, համաձայն Հայկէսի Պետական Համալսարանի Նախագահի դրկտ. Մահեր Զարմանի առաջարկին:

Վարչական Նոր պաշտօն ստանձնողներուն մէջ կան երկու սուրիահայեր, որոնք պիտի ստանձնեն հետեւեալ պաշտօնները իրենց մասնագիտական բարձր որակին բերումով:



Դրկտ. Նազիրա Սարգիս՝ Դեղագործութեան համալսարանի գիտական հարցերու փոխտնօրէն, իսկ դրկտ. Էլիզաբէթ Սարգիս՝ Ատամաբուժութեան համալսարանի աշակերտական եւ վարչական հարցերու փոխտնօրէն:

Յիշեցնենք, որ դրկտ. Նազիրա Սարգիս առաջին սուրիահայ նախարարուհին էր, որ նախապէս սուրիական կառավարութեան մէջ կենսոլորտի նախարարի պաշտօն ստանձնած էր:

-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտնեց, որ ԱՄՆ եւ անոր ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ կը շարունակեն սուրիական քարիւղային հարստութիւնը թալանել:

Նախարարութիւնը նամակ յղեց ՄԱԿ-ի քարտուղարին եւ Անվտանգութեան Խորհուրդին, կոչ ուղղելով անոնց վերջ տալու ԱՄՆ-ի եւ սուրիական տարածքներու վրայ գտնուող անոր ուժերու թշնամական արարքներուն եւ ոտնձգութիւններուն:



Նախարարութիւնը անդրադառնալով քարիւղային եւ հանքային հարստութիւններու կրած վնասներուն ըսաւ. «ԱՄՆ-ի եւ անոր ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու թալանին հետեւանքով սուրիական քարիւղային եւ հանքային հարստութեան հատուածին կրած ընդհանուր վնասները 2011-էն մինչեւ 2023-ի կէսը հասան 115, 2 միլիարդ ԱՄՆ տոլարի»:

Նախարարութիւնը անեցուց, որ Սուրիոյ մէջ քարիւղային հատուածին կրած ուղղակի վնասները հասան 27,5 միլիարդ ԱՄՆ տոլարի, հետեւեալ մանրաշանութեամբ:

-Շուրջ 341 միլիոն քարիւղի տակառ թալանուած է այրուած է, 100-էն 130 հազար տակառ օրական դրութեամբ, իսկ վերջերս 150 հազար տակառ օրական, ինչպէս նաեւ 59,9 միլիոն մեթր խորանարդ կազի տակառ է 413. 000 թոն բնակարանային օգտագործման կազ օրական, ընդհանուր հաշիւով 21,4 միլիարդ ԱՄՆ տոլար:

-Քարիւղային հաստատութիւններու քանդումի եւ թալանումի վնասները հասան շուրջ 3,2 միլիարդ ԱՄՆ տոլարի:

-«Միջազգային Դաշինք» կոչուած օդանաւերու ռմբակոծման հետեւանքով վնասուած քարիւղի եւ կազի հաստատութիւններուն վնասները հասան 2, 9 միլիարդ ԱՄՆ տոլարի:

Նախարարութիւնը անեցուց, որ քարիւղային հատուածի կրած անուղղակի վնասները հասան 87,7 միլիարդ ԱՄՆ տոլարի:

Լուրեր Հայաշխարհին

ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ԲԵՈՋ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՆ ՄԻՋՈՑՈՎ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԹՈՅՆՏՈՒԹԵԱՄԲ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ Է ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ինչպես նախապես յայտարարուած էր, Ռուսիոյ Դաշնութեան կառավարութիւնը հանդէս եկած է Արցախի Հանրապետութեան մարդասիրական օգնութիւն տրամադրելու նախաձեռնութեամբ:



12 Սեպտեմբերին, մարդասիրական բեռը ռուսական Կարմիր խաչին միջոցով եւ այդ կազմակերպութեան մեքենաներով, հանրապետութեան իշխանութիւններուն թոյլտուութեամբ, մուտք գործած է Արցախի Հանրապետութիւն՝ Ասկերան քաղաքէն:

Օգնութիւնը կը պարունակէ ռուսական արտադրութեան կենսական նշանակութեան ապրանք: Մանրամասնութիւնները պիտի ներկայացուին Արցախի հանրային պատկերասփիւռի եթերով:

Արցախի Տեղեկատուական Շտապ

ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱՒ ԱՐՅԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՐԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

10 Սեպտեմբերին, Արցախի Հանրապետութեան (ԱՀ) Ազգային ժողովը հրաւիրուած էր յատուկ նիստի՝ նուիրուած ԱՀ նորընտիր նախագահ Սամուէլ Շահրամանեանի պաշտօնի ստանձնումի արարողութեան:

Նորընտիր նախագահը երդում կատարեց՝ ձեռքը դնելով Սահմանադրութեան եւ 17-րդ դարու Աւետարանին վրայ: Հընչէնք Արցախի Հանրապետութեան պետական օրհներգը:



Այնուհետեւ օրհնանքի խօսք ուղղեց Տէր Միսա Բահանայ Մովսիսեան:

Սամուէլ Շահրամանեանին խորհրդարանի անունով շնորհակտրեց Ազգային ժողովի նախագահի պաշտօնակատար Գագիկ Բաղդուցը:

Արարողութեան ներկայ էին նաեւ Արցախի Հանրապետութեան նախկին երեք նախագահներ՝ Արկատի Դուկասեան, Բակօ Սահակեան, Արայիկ Յարութիւնեան, ինչպէս նաեւ գործադիր իշխանութեան ներկայացուցիչներ:

ՆՍՕՏՏ ԱՐԱՍ...

Սկիզբ՝ Էջ 1

Ճգնաժամային հանգրուանին Ձեր ստանձնած պատասխանատուութիւնը վերանորոգ հաւատքով ու նուիրումով կարենաք լիովին արդարացնել՝ ի խնդիր Արցախի մեր սիրելի ժողովուրդին ինքնորոշման արդար իրաւունքին:

Արդարեւ, Արցախի հայութեան կեանքի մշուշապատ այս օրերուն, Արցախի ապաշրջափակումը եւ անոր իրաւունքներու տիրացման հետապնդումը հարկ է որ դառնայ առաջնահերթ նպատակը իւրաքանչիւր հայու եւ համայն հայութեան: Մենք անձնապէս, մեր բոլոր կարելիութիւնները ի գործ դրած ենք ու պիտի շարունակենք դնել միջազգային մակարդակով հետապնդելու Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերով միշտ եղած է Արցախի պետութեան, անոր քաջարի բանակին ու հերոսական ժողովուրդի կողքին: Կը վստահեցնենք Ձեզ, որ նոյն ոգիով պիտի շարունակենք մեր Սուրբ Աթոռին զօրակցութիւնը Արցախի Հանրապետութեան:

Անգամ մը եւս, անձնապէս եւ յանուն մեր Սուրբ Աթոռի միաբանութեան, ժողովականութեան, թեմերուն եւ մեր ժողովուրդին ջերմօրէն կը շնորհակտրեմք Ձեր ընտրութիւնը: Թող Ամենաբարին Աստուած Իր հովանին անպակաս ընէ Արցախի Հանրապետութեան վրայէն, եւ Արցախի հայութեան շնորհէ խաղաղ ու բարօր տարիներ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԴՐՕՇՆ ՕՐԶՆՈՒԵՅԱՒ ՆՍՕՏՏ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԶԵՌԱՄԲ

Համազգայինը 95 տարիներէ ի վեր կը գործէր միայն իր տարբերակաւ շանով: Միութեան վերջին՝ 9-րդ պատգամաւորական ժողովը (Մայիս 2022, Երեւան) հաստատեց Միութեան դրօշի մը որդեգրման անհրաժեշտութիւնը:

Արդարեւ, 4 Սեպտեմբեր 2023-ին, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը՝ բաղկացած Կեդրոնական եւ Լիբանանի Շրջանային վարչութիւններու անդամներէ, ՀՕՄ-ի եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներէ, Համազգայինի գանազան հաստատութիւններու տնօրէններէ, այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք, ուր Վեհարանին մէջ հանդիպեցաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ ներկայացուց Համազգայինի նորաստեղծ դրօշը:



Վեհափառ Հայրապետը գոյգ միաբաններու ներկայութեամբ օրհնեց դրօշը եւ դրուատիքով խօսեցաւ Համազգայինի ունեցած 95-ամեայ դերակատարութեան եւ գործունէութեան մասին եւ յայտնեց, որ այս օրերուն ազգային արժեքները, կրթութիւնը եւ մշակոյթը աղաւաղելու հոսանքին դէմ թիակարելու մէջ մեծ է Համազգայինին դերը:

Ապա կեդրոնական վարչութեան ատենապետ Չաքար Բէշիշեան շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հօր, իր մնայուն նեցուկին ու քաջալերանքին համար:

Նշենք, որ Համազգայինը իր հիմնադրութեան 95-ամեակը կը շարունակէ նշել աշխարհով մէկ: 12-18 Սեպտեմբեր 2023-ին Երեւանի մէջ տեղի կ'ունենայ գրական-գեղարուեստական ձեռնարկներու շարք, ներառեալ՝ պաշտօնական հանդիսութիւն:

ՍԱՄՈՒԷԼ ԸՆԶՐԱՄԱՆԵԱՆ...

Սկիզբ՝ Էջ 1

Նակցութիւն» եւ «Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւն» խմբակցութիւնները հանդէս եկան առաջադրուած թեկնածուին ներկայացնող ելոյթներով, պատասխանեցին պատգամաւորներու հարցումներուն:

ԱՀ նախագահի թեկնածու Սամուէլ Շահրամանեան ԱՀ Ազգային ժողովին ներկայացուց Արցախի ապագային մասին իր տեսլականն ու ծրագրային դրոյթները եւ պատասխանեց Է հարցումներուն:

Միտքերու փոխանակումի ընթացքին ելոյթ ունեցաւ «Միասնական Հայրենիք» խմբակցութեան ղեկավար Մարսել Պետրոսեան, որ յայտարարեց, որ խմբակցութիւնը պիտի չմասնակցի ԱՀ նախագահի ընտրութիւններուն:

Սամուէլ Շահրամանեանի եզրափակիչ ելոյթէն վերջ հաշուիչ յանձնախումբի ղեկավար Եղուարտ Աղաբէկեան պատգամաւորներուն ներկայացուց ընտրութիւններուն կարգը, որմէ ետք տեղի ունեցաւ պատգամաւորներու գաղտնի քուէարկութիւնը:

Քուէարկութեան մասնակցեցան 23 պատգամաւոր, որոնցմէ 22-ը քուարկեց կողմ, իսկ 1-ը՝ դէմ:

Քուէարկութեան արդիւնքով ԱՀ Ազգային ժողովը Սամուէլ Շահրամանեանը ընտրեց Արցախի Հանրապետութեան նախագահ:

ՀՅԳ ԲԻՒՐՈՆ...

Սկիզբ՝ Էջ 1

Իր բարձրութեան վրայ գտնուեց եւ կարողացաւ պատասխանատու որոշում գոյացնել, ինչի կապակցութեամբ շնորհակտրում ենք թէ՛ Արցախի Հանրապետութեան նորընտիր նախագահ պարոն Սամուէլ Շահրամանեանին, թէ՛ խորհրդարանական ուժերին:

Այս ճակատագրական օրերին Արցախի ղեկավարութիւնը ստանձնելու յանձնառութիւնը յարգանքի եւ դրուատանքի արժանի քայլ է: Լիայոյս ենք, որ պարոն Շահրամանեանը կը կարողանայ փոխգործակցութեան ու միասնականութեան մթնոլորտ ձեւաւորել Արցախի պետական կառավարման համակարգում եւ համահայկական զօրակցութեամբ առաջնորդել արցախահայութեան ազատութեան պայքարը:

Արցախը հայկական պահելու, արցախահայութեան ինքնորոշման իրաւունքը անվերապահօրէն իրացնելու այդ պայքարում ՀՅԳ Դաշնակցութիւնը իր ողջ կարողականութեամբ մշտապէս Արցախի պետականութեան եւ արցախահայութեան կողքին է:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Շարժուն և սկիզբը աշխույժ պիտի ըլլաք ու նախաձեռնէք ընտանեկան հաճելի պտոյտի մը՝ նախքան եղանակի փոփոխութիւնը:



ՅՈՒ

Վերամուտը լաւ առիթ է վերակազմակերպուելու համար: Նոր ծրագիրներ պիտի մշակէք ու ժամանակակից ոճ պիտի ներառէք ձեր աշխատանքին մէջ:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Տնտեսական դժուարութիւնները կրնաք յաղթահարել նոր աշխատանքի ձեռնարկելով: Մի՛ տատամփք աշխատանքի նոր առաջարկ ընդունելու:



ԽԵՅՉԵՏԻՆ

Եթէ այս շաբաթ ծրագրած էք կարելորդ աշխատանք մը սկսիլ, մի՛ աճապարէք: Նախ ծրագիր մշակեցէ՛ք ու խորհրդակցեցէ՛ք փորձառու մարդոց հետ:



ԱՌԻԾ

Փորձեցէ՛ք հեռու մնալ խնդրալարոյց մարդոցմէ, որպէսզի ձեր գործերը հեզասահ ընթանան:



ԿՈՅՍ

Այս շաբաթ մտերիմներ ձեր օգնութեան կարիքը պիտի ունենան, իսկ դուք ժամանակին պիտի ցուցաբերէք հարկ եղած օգնութիւնը:



ԿԵՒՈՔ

Հաւանական են անկանխատեսելի դրամական մուտքեր՝ անսպասելի աղբիւրներէ: Հաւանաբար ամսականի յաւելում ունենաք:



ԿԱՐԻՃ

Վերամուտը յաւելեալ եռանդով օժտած է ձեզ: Շարունակեցէ՛ք հետեւիլ ձեր գաւակներուն կամ թռուներուն ուսումնական կեանքին ու խրախուսել զիրենք:



ԱՂԵՂԱՊՈՐ

Յաճախ ձեր ներքին ձայնին յուշած վարկածները ճիշդ դուրս կու գան: Ձեր գործերն ու ընթացքը բարիին համար պիտի ըլլան եւ բարիով պիտի պսակուին:



ԱՅՇԵՂՋԻՐ

Միջադէպ կեանքի մէջ յառաջացում մը պիտի փոխէ ձեր տրամադրութիւնն ու ծրագիրները: Բախտը պիտի ժպտի ձեզի վերջապէս:



ՋՐՅՈՍ

Ականջ մի՛ տաք բամբասանքին ու մարդոց հետաքրքրութիւններու յագեցման մի՛ նպաստէք: Ձեր գործը յառաջընթաց կ'արձանագրէ ու մարդոց հետաքրքրութիւնը կը շարժէ:



ՋՈՒԿ

Ձեր բոլոր ծրագիրներուն մասին մի՛ խօսիք նախքան անոնց իրականացումը: Մարդիկ կրնան կրկնօրինակել ձեր մտայնացումներն ու սեփականացնել ձեր ծրագիրները:



ԱՇՏԿԵՐՏ, ԾՆՈՂԷ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տան մէջ ձեր գաւակներուն հետ, երբեմն իրենց համահաւասար, դպրոցական տնային պարտականութիւններ կատարելը ընդհանրացած երեւոյթ դարձած է: Ծնողներ կարծէք պայքարի մտած են իրենց գաւակներուն հետ այս աշխատանքին շուրջ: Դժբախտաբար, երբեմն այս հետապնդումը կամ հսկողութիւնը կը վերածուի պարտադրանքի եւ անբաղձալի սովորութիւն կը զարգանայ մեր գաւակներուն մօտ: Այլ խօսքով՝ մենք չափազանցուած

զարգացնել իր քայլերը, նոյնպէս ալ դպրոցական օրերուն զինք պիտի վարժեցնէք աստիճանաբար, քայլ առ քայլ կատարել իր պարտականութիւնները, դուք պարզապէս զօրավիզ պիտի կանգնիք իրեն ու սորվելու մթնոլորտ ստեղծէք տան մէջ, մերթ ընդ մերթ օգնելով իրեն, մինչեւ որ վարժ դառնայ առանձին սորվելու իր դասերն ու կատարելու պարտականութիւնները:

3. Օգնեցէ՛ք անոր որ ունենայ սորվելու յատուկ վայր եւ տեղ

Օրուան ընթացքին վարժեցուցէ՛ք ժամեր սահմանել դաս սորվելու՝ համաձայն իր տրամադրութեան եւ ձեր տան մթնոլորտին: Յատկացուցէ՛ք նաեւ սորվելու յատուկ վայր, անկիւն, որ հեռու ըլլայ աղմկոտ սենեակներէ եւ խանգարիչ ազդակներ չունենայ, ինչպէս՝ պատկերասփիւռ, բքիջային հեռաձայն, խաղալիքներ եւ այլն:



հսկողութեամբ մեր գաւակները կը գրկենք կարելորդ հմտութենէ մը՝ ինքնուրոյն դառնալէ:

Յաճախ ծնողներ իրենց չափազանցուած հսկողութիւնը կը պատճառաբանեն ըսելով, որ եթէ չհսկեն տնային պարտականութիւններու կատարման եւ դասերու պատրաստութեան, եթէ խիստ չըլլան, իրենց գաւակները անպատասխանատու եւ ծոյլ կը դառնան:

4. Երկխօսութիւն կատարեցէ՛ք դպրոցին հետ:

Ծնողները պէտք է մերթ ընդ մերթ հանդիպում ունենան իրենց գաւակին ուսուցիչներուն հետ, որպէսզի ստուգեն անոր ընթացքը եւ ուսուցիչէն եւս խնդրեն, որ զարգացնէ ինքնուրոյն աշխատելու անոնց ունակութիւնը:

Մինչդեռ ծնողներ պէտք է ամէն ջանք թափեն իրենց գաւակները ինքնուրոյն աշխատանքի վարժեցնելու:

Մեր պատանիներուն սորվելու, պարտականութիւնները ինքնուրոյն կատարելու գիտակցութիւնը ձեւաւորելու համար կ'առաջարկենք հետեւեալները:

1. Զարգացուցէ՛ք եւ խրախուսեցէ՛ք տնային պարտականութիւնները առանձին կատարելու իր ճիգերը:

Թոյլ տուէք որ ձեր գաւակը ի՛նք նայի դասացուցակին, ի՛նք ճշդէ ընելիքները, դասաւորէ պարտականութիւններու կատարման ժամանակն ու ձեւը, ստուգէ թելադրուած պարտականութիւնները եւ ի՛նք շտկէ պայուսակը յաջորդ օրուան դասերուն համաձայն: Դուք մի՛ աշխատիք իրեն փոխարէն:

2. Աստիճանաբար զարգացուցէ՛ք իւրովի աշխատելու հմտութիւնը:

Այնպէս ինչպէս նորածինը չի կրնար անմիջապէս քալել եւ վազվզել, այլ ձեր հետեւողական աջակցութեամբ կը յաջողի

5. Օգնեցէ՛ք ձեր գաւակին, երբ ան ձեզի դիմէ:

Ինքնուրոյն աշխատիլ չի նշանակել, որ ձեր գաւակը պէտք է գրկել ձեր օգնութենէն: Պատանիին մտքին մէջ մերթ ընդ մերթ կրնան յառաջանալ հարցեր, որոնց լուծման համար ձեզի կը դիմէ: Նման պարագաներու օգնեցէ՛ք անոր եւ փորձեցէ՛ք իմանալ թէ ինչո՞ւ չէ կրցած լուծել պարտականութիւնը: Եթէ որոշ տեղեկութիւններու պակաս ունի, տրամադրեցէ՛ք անոր պէտք եղածը, եթէ որոշ դասեր չէ հասկցած՝ բացատրեցէ՛ք ու պարզաբանեցէ՛ք:

6. Զմոռնա՛ք ազատ ժամ տրամադրել անոր:

Ձեր գաւակներուն օդի եւ ջուրի չափ անհրաժեշտ է խաղի կամ այլ զբաղումներու ժամանակ տրամադրելը: Պատանին իր յոգնութիւնը թօթափելու եւ հանգստանալու համար կարիք ունի խաղի եւ զբաղումի: Ազատ ժամերէ, ընկերային միջավայրէ եւ այլ զբաղումներէ մի՛ գրկէք ձեր գաւակը, որպէսզի ուսումը բարդոյթի չվերածուի:

Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԷԻՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՄԱՐ ԱՄՐՏԵՍԱՐ

Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը Եւրոպայի 2024 թուականի առաջնութեան ընտրական փուլի հերթական խաղին հաւասար արդիւնքով աւարտեց Թուրքիոյ հետ հանդիպումը: Խաղի առաջին կիսուն, կողմերը չկրցան կոլ նշանակել, իսկ երկրորդ կիսուն 49-րդ վայրկեանին, Արտակ Դաշեան կատարեց կոլերու բացումը: Հայ մարզիկները ամեն գոլով փորձեցին պահպանել առաւելութիւնը, սակայն 88-րդ վայրկեանին դաշտի տերերը յաջողեցան նշանակել հաւասարութեան կոլը: Թուրքիոյ հաւաքականը այս խաղէն ետք ունեցաւ 10 կէտ եւ շարունակեց գլխաւորել աղիւսակը: Հայաստանի եւ Խորուաթիոյ կազմերը 7-ական կէտով կը գրաւեն 2-3-րդ տեղերը:



ԳՈՒ ՍԱՀՎԿԵԱՆ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԻ ԱՐԺԱՆԱՅԱՐ

Եւրոպայի ախոյեան Գոու Սահակեան Ռիատի մէջ ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնութեան նուաճեց Հայաստանի առաջին մետալը: Տղամարդոց 67 քկ. ծանրութեան կարգին հայ մարզիկը երկամարտին ցոյց տուաւ 312 քկ. (142+170) արդիւնք եւ գրաւեց 3-րդ տեղը: Ան պրոնզէ մետալ նուաճեց նաեւ պոկումի վարժութեան: Այս ծանրութեան կարգին աշխարհի ախոյեան դարձաւ չինացի Լիու Չենը, որ 21 քկ.-էն աւելի՝ 333 քկ. բարձրացուց:



Այս ծանրութեան կարգին աշխարհի ախոյեան դարձաւ չինացի Լիու Չենը, որ 21 քկ.-էն աւելի՝ 333 քկ. բարձրացուց:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՆՁ ԹԻՏԸՐ ՀԵՌԱՅՈՒՅԱՐ ԻՐ ՊԼԵՏՕՆԵՆ

Գերմանիոյ Ֆուտբոլի Դաշնութիւնը (DFB) իր հերթական նիստով հեռացուց Հանզ Թիտըր ֆիլիքը ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնէն: Այս մասին յայտարարութիւն կատարեց կազմակերպութեան մամլոյ ծառայութիւնը: Հեռացուցան նաեւ ֆիլիքի օգնականներ՝ Մարկոս Չորքս ու Տանի Ռիլը: Որոշումէն մէկ օր առաջ, գերմանացիները 1 - 4 հաշուով պարտուած էին ճափոնի հաւաքականէն: «Գերմանիոյ հաւաքականին անհրաժեշտ է նոր խթան վերջին հիասթափեցնող արդիւնքներէն ետք: Մեզի պէտք է վերադարձնել լաւատեսութեան եւ վստահութեան ոգին՝ Եւրոպայի առաջնութենէն առաջ, որ տեղի պիտի ունենայ մեր երկիրէն ներս: Շատ ծանր որոշում է, որովհետեւ ես բարձր կը գնահատեմ Հանզ ֆիլիքի արհեստավարժ եւ մարդկային որակը: Սակայն մարզական յաջողութիւնները առաջնահերթութիւն են Գերմանիոյ ֆուտբոլային միութեան համար: Այդ պատճառով այս որոշումը անխուսափելի էր», ըսաւ DFB-ի տնօրէն Պերնտ Լոյնստորֆը:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 455)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2			■									
3						■	■	■		■		
4						■		■			■	
5				■	■						■	
6	■		■			■			■		■	
7		■		■				■				■
8							■					
9											■	
10												
11		■	■	■	■	■	■	■	■	■	■	■
12								■				

Հորիզոնական

- Ուղտի ձայն: Ահաւասիկ:
- Նմանաձայն տառեր: Պայքարելու տրամադիր:
- Իգական անուն: Հակառակ՝ յարաբերական դերանուն: 5400:
- Տառի մը հարեւանները: Տառի մը անունը: Հակառակ՝ աղբիւր:
- Ծեփի համար գործածուող գաճաքար: Վերցնել, բարձրացնել:
- Ձայնակիչ: 7500:
- Հակառակ՝ Իրանի այն մասը, ուրկէ բազուկը կը կախուի: Հագուստի ծալք:
- 4200: Վահանի դուրս ցցուած կեդրոն:
- Հոտաւետ ծաղիկ մը: Թուանշան մը:
- Գուրք:
- Տաք երկիրներու պտուղ:
- Լեցուն: Հակառակ՝ ապրելու համար անհրաժեշտ նկատուող հեղուկ: Հակառակ՝ 430:

Ուղղահայեաց

- Ժողովրդային ասացուածք կ'ընէ. «Եթէ ունիս, բեր բերցնող շատ կ'ըլլայ»: Եկեղեցիներուն մօտ փոքրիկ սենեակ, ուր մոմ կը ծախեն:
- Գաղթող մեծ թռչուն: Կրկնուած ձայնաւորներ:
- Մասնիկ:
- Տարուան եղանակներէն: Հակառակ՝ ժամանում:
- Չոր բախտի հանդիպած:
- Առարկայ: Խառնատառ՝ գայրոյթ:
- Բաղաձայն տառեր: Հակառակ՝ գետեզրի վրայ կախուող ճիւղերով ծառ: Գագանի բոյն:
- Արդի: Իրերայաջորդ տառեր: Ումպ:
- Հակառակ՝ մանչ: Շտապել:
- Անձնական դերանուն: Անտիս Ահարոնեանի վեպերէն:
- Պետք: Հակառակ՝ 209:
- Հայեացք: Չօրք:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 454)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	վ	ա	հ	ա	ն	ք	է	ք	է	ա	ն	
2	ա	ռ	ա	ր	կ	է	լ	մ	բ	ն	ա	
3	ք			կ	ա	ք		ն	ք			
4	ս	ա	ա	ա	ք	է	լ			ք	ա	ւ
5	ա	ր	ա		ա	ւ	ն	ւ	ք			ա
6	կ	լ	լ	գ	ա	հ	ա	ւ	ա	ն	ն	դ
7	ա	լ		լ	ի	մ		լ	ւ			
8	լ	ի		ք	ի		ք		է	մ		
9	ա	ք	ա	ա	ն	կ	ա	ք		ք	ի	
10	ա	ն	ի	կ	ա		է	ն	յ	ա		
11	ն	ա	յ	ա	ք	ա	ւ	ա	ն	ն	դ	
12	ի	լ		վ	ա	ր	պ	է	տ		ի	ա

ԼՈՒԾՈՒՄ

Երևուեցւոր 18/9 21° 34°	Երեքեցւոր 19/9 20° 33°	Չորեքեցւոր 20/9 19° 34°	Հինգեցւոր 21/9 20° 36°	Որբար 22/9 22° 37°	Շաբար 23/9 21° 38°	Կիրակի 24/9 18° 36°
---	--	---	--	--	--	---

ԱԶԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ՎԵՐԱՄՈՒՏԸ ՍԿՍԱԿ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՅՈՐ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ

Երկուշաբթի, 11 Սեպտեմբեր 2023-ի առաւօտուն, Բերիոյ Դայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Ս.

եան համար:

Մակար սրբազան սրտի խօսքը ուղղելով ճեմարանի աշակերտութեան եւ ողջ անձնակազմին իր հայրական օրհնութիւնը տուաւ անոնց՝ մաղթելով, որ անփորձանք, արդիւնաւետ եւ բարեյաջող տարեշրջան մը դիմաւորեն:

Այնուհետեւ, սրբազան հայրը ուսուցչական եւ վարչական կազմին հետ մտերմիկ հանդիպում մը ունեցաւ: Ան գնահատեց նուիրումով ծառայող ուսու-



Մակար Սրբ. Եպս. Ազարեան 2023-2024 ուսումնական տարեշրջանի վերամուտին առիթով այցելութիւն տուաւ Ազգ. Զարեն Եփփե ճեմարան, ուր ջերմապէս դիմաւորուեցաւ ճեմարանի ինսամակալութեան ատենապետ երկրչփ. Տիգրան Պետրոսեանի, ճեմարանի տնօրէնուհի Զեփիւռ Ռէսեանի, պետական տնօրէնին եւ ուսուցչական կազմին կողմէ:



ցիչները, քաջալերեց, գօտեպնդեց եւ առաւել ուժ եւ կորով մաղթեց անոնց, որպէսզի մեծ սիրով շարունակեն իրենց վճարատախաճ առաքելութիւնը, գիտութեան լոյսը վառ պահելով աշակերտներուն մէջ:

Ապա, սրբազան հայրը ճեմարանի ինսամակալութեան եւ Տնօրէնութեան հետ տեսակցութիւն ունեցաւ տնօրէնութեան գրասենեակէն



Սրբազան Զոր կ'ընկերակցեին Առաջնորդի Օգնական Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Ազգ. Վարչութեան անդամ երկրչփ. Յարութ Աւրնեան:

Ճեմարանի տնօրէնուհի Զեփիւռ Ռէսեան արտասանեց բարի գալուստի խօսք մը, որուն ընդմէջէն շնորհակալութիւն յայտնեց սրբազան



ներս, գնահատեց անոնց աշխատանքը եւ յաջողութիւններով լեցուն տարեշրջան մը մաղթեց:



հոր՝ վերամուտին առիթով իր այցելութեան եւ հայրական հոգածութեանը եւ յաջողութիւններով լեցուն տարեշրջան մը մաղթեց:

տանքը եւ յաջողութիւններով լեցուն տարեշրջան մը մաղթեց:

ԼԱԹԱՔԻՈՅ ԱԶԳ. Ս. ՆԱՀԱՏԱԿԱՃ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2023/2024 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԸ

Ազգ. Ս. Նահատակաց վարժարանը կը վերսկսի իր առաքելութիւնը ուսումնատեւնչ ու ապագա-

յին դաստիարակութիւն ջամբելով: «Սիրելի՛ աշակերտներ, այսօր մեր գաղութի ղեկավարները հե-



յատեսիլ սերունդներ կազմաւորելու, որպէսզի անոնք մեր կեանքին տան նոր որակ, նոր սլացք, որպէսզի գաղութի դերն ու Նշանակութիւնը աւելիով շեշտուի եւ երբեք չխամրի:

Երկուշաբթի, 11 Սեպտեմբեր 2023-ի առաւօտեան, վարժարանիս

տաքըրուած են մեր կրթական դաստիարակչական գործընթացով: Մեր կարգին խօսք կուտանք ըլլալու նախանձախնդիր, որպէսզի մեր աշակերտները ըլլան ուսումնական կեանքի մէջ յաջող եւ տիպար հայեր եւ հասակ նետելով իրենք եւս

առաջին գանգը հնչեց, ներկայութեամբ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տեր Վազգէն Ա. Զ. Ի. Ս. Զեօշկերեանի, Թաղական Խորհուրդի ատենապետին, Պատկան Մարմնի ներկայացուցիչներուն, վարժարանիս հոգաբարձութեան եւ կրթութեան տնօրէն Պատրիէ Սալեմի:

Աշակերտները «Առաւօտ Լուսոյ» աղօթքով Տեր հոր հետ վերամուտին բացումը կատարեցին, ապա վարժարանիս տնօրէնուհի Զորի Գարամարտեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն, հոգաբարձութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան ու ըսաւ,



տեր դառնան հայ դպրոցին, գաղութին եւ հայրենիքին»:

Զահանայ հայրը իր կարգին մաղթեց անվտանգ եւ բարեբեր տարի, ուժ եւ համբերութիւն ցան-



որ բոլորս ամրան արձակուրդէն կազդուրուած եւ մեր դպրոցը կարօտցած կը սկսիք մեր նուիրական առաքելութիւնը՝ ուսման կողքին հայ աշակերտին մեր մայրենի լեզուն սորվեցնելով եւ հայեցի ազգա-

կալով ուսուցչական կազմին, տնօրէնութեան, բեղուն աշխատանք՝ հոգաբարձութեան եւ բարի երթ՝ աշակերտութեան:

Նայիրի Կարապետեան